ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Կոզիշտիի 1

№ 1507-Ա « 21 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՄՈՍԿՎԱ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով՝ «ParkSeason Expo» քաղաքային միջավայրի նախագծման և հանգստի գոտիների կազմակերպման և զարգացման միջազգային ֆորումին մասնակցելու, ինչպես նաև աշխատանքային հանդիպումներ իրականացնելու նպատակով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2025 թվականի ապրիլի 23-ից 25-ը ներառյալ գործուղել Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվա՝ հետևյալ կազմով.

Պետրոս Պետոյան	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Սուրեն Վարոսյան	Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար
Անդրանիկ Թևոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Ընդունել ի գիտություն, որ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Կենտրոն վարչական շրջանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Արաբկիր վարչական շրջանի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

4. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

5. Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի բացակայության ընթացքում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Նիկոլայ Սարիբեկյանին:

6. Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Սուրեն Վարոսյանի բացակայության ընթացքում Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Գևորգ Վարոսյանին:

7. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Թևոսյանի բացակայության ընթացքում շինարարության և բարեկարգման վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալ Գարեգին Գրիգորյանին:

8. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ